



„ՆՅՈՒ ՀԱՅՎԵՅ” ՍՊԸ

ՔՊԼ-000273, 1-ին դաս

«ՎԱՆԱՁՈՐ-1» ԳԲԿ-Ի ՄՈՏԵՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ՄՈՏԵՑՈՒՄ)
ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2026

„ՆՅՈՒ ՀԱՅՎԵՅ” ՍՊԸ / "НЬЮ ХАЙВЕЙ" ООО

Լիցենզիա ՔՊԼ-000273, 1-ին դաս/ ЛИЦЕНЗИЯ ՔՊԼ-000273, 1-й класс

«ՎԱՆԱԶՈՐ-1» ԳԲԿ-Ի ՄՈՏԵՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ՄՈՏԵՑՈՒՄ)
ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄ

КАПИТАЛИСТИЧЕСКИЙ РЕМОНТ
ПОДЪЕЗДНОЙ ДОРОГИ К КОМПЛЕКСУ ЗДАНИЙ «ВАНАДЗОР-1»

Կատարող՝
Исполнитель



«Նյու Հայվեյ» ՍՊԸ / "НЬЮ ХАЙВЕЙ" ООО
տնօրեն Հայկ Նորեկյան / директор Айк Норемян

Պատվիրատու՝
Клиент

Գազարուր Արմենիա ՓԲԸ / ЗАО «Газпром Армения»
Տնօրեն Ա. Խաչատուրյան
Директор А. Хачатурян

Համաձայնեցված է՝
Согласованный

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար
Исполняющий обязанности главы общины Ванадзор

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ
Аркадий Пелешян



„ՆՅՈՒ ՀԱՅՎԵՅ” ՍՊԸ / "НЬЮ ХАЙВЕЙ" ООО

ՔՊԼ-000273, 1-ին դաս / ՔՊԼ-000273, 1-й класс

«ՎԱՆԱԶՈՐ-1» ԳԲԿ-Ի ՄՈՏԵՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ՄՈՏԵՑՈՒՄ)
ՎԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄ

КАПИТАЛИСТИЧЕСКИЙ РЕМОНТ
ПОДЪЕЗДНОЙ ДОРОГИ К КОМПЛЕКСУ ЗДАНИЙ «ВАНАДЗОР-1»

Տնօրեն / директор

Ն.Գ.Ի. / ГИП

Հ.Նորեկյան / А. Норемян

Հ.Նորեկյան / А. Норемян

ԵՐԵՎԱՆ / ЕРЕВАН 2026



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ՃԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Հ - 000630

(հավաստագրի սերիան, համարը)

1-ԻՆ ԿԱՐԳ

(հավաստագրի կարգը)

ՀԱՅԿ ՆՈՐԵԿՅԱՆ

(մասնագետի անուն ազգանուն)

Նույնականացման քարտ՝ 003240611, տրված 05.19.2015թ. 007-ի կողմից

(մասնագետի անձնագրային տվյալները)

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՆԱԽԱԳԾՈՂ

(ՇՄՁ հավաստագրված մասնագիտության անվանումը)

ՏՐՎԵԼ Է՝

27.06.2024թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ՝

27.06.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG18-2E86-6C37-E27B



Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000273, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-21, «ՆՅՈՒ ՀԱՅՎԵՅ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 1/4, 54

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)



ՀՄԿԻԶ ՀԱՄԱՐ՝ UG57-E9CF-A65F-BE22

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000273-09

(ներդիրի սերիան, համարը)

«ՆՅՈՒ ՀԱՅՎԵՅ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ՝ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ԹՈՒՆԵԼՆԵՐ, ՈՒՂԵԱՆՑՆԵՐ, ԷՍՏԱԿԱԴԱՆԵՐ, ՀԵՆԱՊԱՏԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

21.08.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝

21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում



ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UGB5-DE31-4314-1814

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ՀԱՅԿ ՆՈՐԵԿՅԱՆ	<	000630	2024-06-27



ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UGB5-DE31-4314-1814

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Ցանկ

Բացատրագիր

Քարտեզ

Գծագրեր

1. Պայմանական նշաններ
2. Ճանապարհի հատակագծեր
3. Ճանապարհի երկայնական կտրվածք
4. Ճանապարհային հագուստի կոնստրուկցիան
5. Վաքի կոնստրուկցիան
6. Ե/բ սալի կոնստրուկցիան
- 7.01. Գաբիոնային շարվածքի երկայնական կտրվածք
- 7.02. Գաբիոնային ցանց և շարվածք
8. Հենապատի կոնստրուկցիան
9. Պարապետների կոնստրուկցիան
10. Ճանապարհի լայնական կտրվածքներ

Ամփոփագրեր

«ՀԱՅՐԵՎՈՐԴԻ

ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ



«HAYR EVVORDI

TITIZYANNER» LLC

**Ի Ն Ժ Ե Ն Ե Ր Ա Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ «ՎԱՆԱԶՈՐ-1
ԳԲԿ ՄՈՏԵՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ՄՈՏԵՑՈՒՄ) ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս

Տնօրեն՝



Հ. Տիտիզյան

Երևան 2026թ

Բացատրական մաս


Համաձայն „ՆՅՈՒ ՀԱՅՎԵՅ” ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի և համապատասխան առաջադրանքի 2026 թվականի փետրվար ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր Համայնքի Վանաձոր քաղաքի «Վանաձոր-1 ԳԲԿ մոտեցնող ճանապարհի (մոտեցում) կապիտալ նորոգման աշխատանքների համար: Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական ՀՀ Լոռու մարզի Վանաձոր Համայնքի Վանաձոր քաղաքի «Վանաձոր-1 ԳԲԿ մոտեցնող ճանապարհի (մոտեցում) կապիտալ նորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղագնության, ակնադիտարկման եղանակով, ինչպես նաև հարակից տարածքներում մեր կողմից կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ:

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքը գտնվում Լոռու մարզում՝ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում: Աշխարհագրական դիրքի առումով տեղակայված է Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջև ընկած նեղ ու երկարավուն գոգավորությունում՝ Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից բարձր է ավելի քան 1353 մետր: Երևանից գտնվում է 128 կմ հյուսիս, իսկ Գյումրիից՝ 64 կմ արևելք:

Կլիմա Ուսումնասիրվող տարածաշրջանի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Վանաձոր համայնքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները:

- Տարեկան միջին ջերմաստիճանը 7.8 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 36°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -30°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 73%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 59%
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը 74սմ է:




Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին: Ըստ ֆոնդային տվյալների մինչև 5.0մ խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվելը գտնվում են ավելի խորը հորիզոններում:

Ֆիզիկա-երկրաբանական երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը չեն նկատվել:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.5g$ արագացմամբ :



Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երեք շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ-1 Հրաբխային տարբեր ապարների խճաքարային նստվածքներ ավազակավի լցոնով, տեղ-տեղ մեծ բեկորների պարունակությամբ: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022 101 աղյուսակ ի (11) V (ՄՆԻՊ IV-2-84-ի (12) V կարգ է), ՀՊԱ 50%:

Շերտ 2 Բեկորային Բազալտներ ամուր, բաց մոխրագույն, ծակոտկեն, շատ հաճախ խոռոչավոր, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 10-25% պարունակությամբ, ավազա-խճավազային լրացումով: Չորրորդական հասակի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՀՀՇՆ 32-01-2022 101 աղյուսակ ի (18¹) VII (ՄՆԻՊ IV-2-84-ի (17) VII կարգ է), ՀՊԱ 100%:

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		2
Գրունտների անվանումները		Հրաբխային ապարների խճաքարային նստվածքներ
Ծավալային խտությունը տ/մ ³	ρ	1,78
Տեսակարար խտությունը տ/մ ³	ρ	2.59
Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	0,05
Ծակոտկենության գործակից	e	0,659
Ներքին շփման անկյուն, աստ.	φ	36°50′
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	38,0
Բնական խոնավություն %	W	17,5
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R ₀	4.5
Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ՀՀՇՆ 32-01-2022	աղ. 101	V (11)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		II

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		1
Գրունտների անվանումները		Բազալտ Բեկորային
Ծավալային Խտությունը տ/մ ³	ρ	2.80
Տեսակարար Խտությունը տմ ³	ρ	2.87
Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	9.25
Բնական թեքության անկյուն, աստ.	φ	70°-80
Ձևախախտման մոդուլը, կգ/սմ ²	E	15000-20000
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R ₀	7.0
Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ՀՀՇՆ 32-01-2022	ադ. 101	VII (18 ¹)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		II

Հրաբխային տարբեր ապարների խճաքարային նստվածքներ ավազակավի լցոնով, տեղ-տեղ մեծ բեկորների պարունակությամբ: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են:

0+170 – կմ 0+280

Բեկորային Բազալտներ ամուր, բաց մոխրագույն, ծակոտկեն, շատ հաճախ խոռոչավոր, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 10-25% պարունակությամբ, ավազա-խճավազային լրացումով: Չորրորդական հասակի հրաբխային ապարներ են:

Կմ 0+280 – կմ 0+395

Հրաբխային տարբեր ապարների խճաքարային նստվածքներ ավազակավի լցոնով, տեղ-տեղ մեծ բեկորների պարունակությամբ: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են:

Հողի հատկությունների դաշտային հետազոտության նպատակներն ու մեթոդները ինժեներա-երկրաբանական հետազոտությունների ժամանակ. (ГОСТ 32868 — 2014 ДОРОГИ АВТОМОБИЛЬНЫЕ ОБЩЕГО ПОЛЬЗОВАНИЯ Требования к проведению инженерно-геологических изысканий) Таблица А

Գեոմոֆոլոգիական պայմաններ	Մակերեսը թեքվածությամբ, մանր թմբավոր, թեթև մասնատված
Գեոլոգիական կառուցվածքը և հողի/գրունտի հատկությունները շինությունների և	Նստվածքների մինչև երեք գենետիկ տեսակ, ոչ ավելի, քան չորս հողի շերտեր տարբեր տեսակների, տեղակայումը

մեթոդներ		հողերի ֆիզիկական հատկություններ	հողի հատկությունների դեֆորմացիա	Հողի ամրություն	Հենքերի/սյուների հիմքային հողի դիմադրություն			
Ստատիկ զոնավորում	+	+	+	+	+	+	+	+
Նմուշային հենքով/սյունով փորձարկում	+	+	+	+	+	+	+	+

Հողերի ֆիզիկական և մեխանիկական հատկությունների լաբորատոր որոշման տեսակները ինժեներաերկրաբանական հետազոտություններում. (ГОСТ 32868 — 2014 ДОРОГИ АВТОМОБИЛЬНЫЕ ОБЩЕГО ПОЛЬЗОВАНИЯ Требования к проведению инженерно-геологических изысканий) Таблица Д

Լաբորատոր սահմանում	Հողեր
	Հրաբխային տարբեր ապարների խճաքարային նստվածքներ
բնական խոնավությունը	+
Ծավալային խտություն	+
Տեսակարար Խտություն	+
Ներքին շփման անկյուն	+
Ձևախախտման մոդուլը	+
Թույլատրելի լարումը	+

Լաբորատոր սահմանում	Հողեր
	Բեկորային Բազալտներ
բնական խոնավությունը	+
Ծավալային խտություն	+

Տեսակարար Խտություն	+
Ներքին շփման անկյուն	+
Ձևախախտման մոդուլը	+
Թույլատրելի լարումը	+

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր Համայնքի Վանաձոր քաղաքի «Վանաձոր-1 ԳԲԿ մոտեցնող ճանապարհի (մոտեցում) կապիտալ նորոգման աշխատանքների ինժինեռաերկրաբանական ուսումնասիրությունների եզրակացություն:

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Ուսումնասիրվող տարածքում երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 2 շերտերով, որոնք ըստ ֆոնդային տվյալների ունեն բավարար ֆիզիկամեխանիկական հատկություններ:

- Տեղամասում ստորերկրյա ջրերը բացակայում են և ըստ արխիվային նյութեր գտնվում են 5մ-ից խորը հատվածներում:

- Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքների կատարելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է

- շերտ 1-ը / Հրաբխային տարբեր ապարների խճաքարային նստվածքներ ավազակավի լցոնով /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:

- ✓ Դիմադրությունը $R_0=4.5կգ/սմ^2$

- շերտ 2-ը / բեկորային բազալտներ/, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:

- ✓ Դիմադրությունը $R_0=7.0կգ/սմ^2$

- Համաձայն 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,5g$:

- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 74 սանտիմետր:

- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են:

- Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Երկրաբան՝



Հ. Տիտիկյան

Օ Փ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ս Ծ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ

1. ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն»

2. ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ.
Ինժեներաերկրաբանական

հետազնությունների նյութերի փորձաքննության Կարգը

3. ԳՕՍՏ 32868-2014 Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության.
Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների իրականացման պահանջներ

4. ՇՆՁ I 2-10-2002 Ինժեներաերկրաբանական հետազնություններ
շինարարության համար

5. ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի
Հանրապետության շինարարական նորմեր

6. ԳՕՍՏ 58325-2018 (Հողեր. Դաշտի նկարագրություն(հետազոտության) ,

7. ԳՕՍՏ 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման
մեթոդներ.

8. ԳՕՍՏ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում.

Լուսանկարներ





«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գլխավոր ճարտարագետ-
Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ



Ա. Գաբրիելյան

11

2025թ.

ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՎՈՅԻ ԿԱԶՄՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԳԲԿ ՎԱՆԱԾՈՐ-1 ՄՈՏԵՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ

(ՄՈՏԵՑՈՒՄ) ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ԳԲԿ Վանաձոր-1 մոտեցնող ճանապարհի կառուցման
աշխատանքների նախագծերի պատրաստման ծառայություններ

Ծրագրի անվանումը	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ԳԲԿ Վանաձոր-1 մոտեցնող ճանապարհի (մոտեցում) կապիտալ նորոգման աշխատանքներ
Ֆինանսավորման աղբյուր	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ սեփական միջոցներ
Պատվիրատու	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Ծառայության անվանումը	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ԳԲԿ Վանաձոր-1 մոտեցնող ճանապարհի կապիտալ նորոգման աշխատանքների նախագծի պատրաստման ծառայություններ
Ճանապարհի/փողոցի անվանումը	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ԳԲԿ Վանաձոր -1 մոտեցնող ճանապարհ
Երկարությունը	350 գծմ
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ճանապարհի/փողոցի կարգը	5-րդ կարգի
Երթևեկելի մասի ծածկի տեսակը	Բետոն, գրունտային
Ընդհանուր դրույթներ	<ul style="list-style-type: none">Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն <u>հայերեն և ռուսերեն լեզուներով</u>՝ հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթղթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով):Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթերցելի:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	<p>Հիմնական պարտականություններ՝</p> <ul style="list-style-type: none">Ինժեներական հետազննման իրականացում:Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգետնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: <u>Ինժեներական գծերի հաղորդակցությունների (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման համար առանձին նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում և տրամադրում:</u>

- Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, կապիտալ նորոգման տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:

Հետազննման վերաբերյալ պահանջներ՝

- ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում կատարել ինժեներաերկրաբանական հետազննում՝ գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում,
- հետազննման և ֆոնդային նյութերի տվյալների հիման վրա կազմել և ներկայացնել կապիտալ նորոգման ճանապարհի ինժեներաերկրաբանական պայմանների մասին տեխնիկական հաշվետվություն՝ համապատասխան հավելվածներով,
- հետազննման ընթացքում իրականացնել կառուցվող ճանապարհի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային տեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:


Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝
- ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի կառուցվող ճանապարհի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա-մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը, աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկը),
- ✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելիեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը՝ նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար՝ կախված հարակից տարրերից),


	<ul style="list-style-type: none"> ✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը), ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեսվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն), ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի կառուցման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր), ✓ համահավաք ամփոփագրեր, ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%), ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ): <p style="text-align: center;">Համաձայնեցումներ՝</p> <ul style="list-style-type: none"> • նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ՆԳՆ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ, • համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների հետ, • տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը, • հաղորդակցուղիների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:
Նորմատիվային պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ 1-2.01-99 շինարարական նորմերով և ԲՕՇ 32836-2014-ի, ԲՕՇ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն: • Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ԲՕՇ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն: • Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ԲՕՇ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն: • ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի և ՄՄ

	<p>ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:</p> <ul style="list-style-type: none"> Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն և 26.10.2006թ. թիվ 1699 որոշումներով սահմանված կարգի համաձայն: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: <p>Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ԴՕՇՏ 21.701-2013, ԴՕՇՏ 21.101-99, ԴՕՇՏ 21.501-2018 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:</p>
Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը


«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ԳՓՀ և ԳՄՊ ՇուՄ բաժնի պետ

 Գ. Ամիրյան
“ 07 ” 11 2025 թ.


«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ՀՄՇ, Վ և ՎԿ բաժնի պետ

 Վ. Մարգարյան
“ ” 2025 թ.

«Ինժեներատեխնիկական կենտրոն»
մասնաձյուղի տնօրեն

 Ա. Խաչատուրյան
“ ” 2025 թ.

«Տրանսգազ» ՍՊԸ
տնօրենի տեղակալ

 Վ. Մարգարյան
“ ” 2025 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԽՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000804, 1-ին դաս

(անհատ, համալրող, դասը)

ՔԱՂԱՔԱՇԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՕՐԲԵԿԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԴՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՋՆՆՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՏՈՒՑՈՒՄ

(քաղաքացիության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-09-13, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքացիության գործունեության տրվելու անվանումը)

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՐՅՈՒՄՈՎ, 62 Շ., 31 ԲՆ.

(գտնվելու վայրը՝ արդյունքում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀԱՅԻՉ ՀԱՄԱՐ՝ UC3D-B197-32E6-5B48



Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Բացատրագիր

Նախատեսվում է իրականացնել «Վանաձոր-1 ԳԲԿ» մոտեցնող ճանապարհի կապիտալ նորոգման նախագիծ: «Վանաձոր-1 ԳԲԿ»-ն, որը պատկանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին չունի պատշաճ մոտենալու և սպասարկելու ճանապարհ: Ուստի նախատեսվում է իրականացնել մոտ 400 մ երկարությամբ և նվազագույնը 3 մ լայնությամբ մոտեցող ճանապարհ:

Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքները և առաջադրանքը, նախատեսվում է իրականացնել տուֆե քարով սալարկում ծածկի հետևյալ շերտերով.

- Խճային նախապատրաստական շերտ $h=15$ սմ
- Ավազակոպճային շերտի տեղադրում $h=10$ սմ
- Ուղղանկյուն տուֆե քարով սալարկում $h=15$ սմ

Եզրային շարքերի տեղաշարժը բացառելու համար նախատեսվել են միաձույլ բետոնյա եզրաշարքեր, հաշվի առնելով ճանապարհների երկայնական թեքությունները, նախատեսվել են նաև լայնական պահանգներ միաձույլ բետոնից՝ համանման բետոնյա եզրաշարքին:

Նախատեսվել է իրականացնել նաև իջատեղի և մուտքի նորոգում, որոնց ճանապարհային ծածկը նախատեսվում է իրականացնել ճանապարհի ծածկին համանման:

Ջրահեռացման իրականացման նպատակով նախատեսվել են վաքեր:

Ճանապարհահատվածում առկա է ստորգետնյա գազի գծի հատման տեղամաս, որտեղ նախատեսված է ե/բ սալեր:

Անհրաժեշտ տեղամասերում նախատեսվել են հենապատեր (բետոնե և գաբիոնային շարվածքով): Անվտանգության նկատառումներից ելնելով նախատեսվել են նաև բետոնյա պարապետներ:

Ինժեներական կոմունիկացիաներ և շինություններ

Համաձայն ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ օրենքի հոդված 12-ի 3-րդ կետի

Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտում գտնվող հաղորդակցուղիները և այլ շինություններն ու հարմարանքները պետք է պահվեն պատշաճ վիճակում և ճանապարհի վերակառուցման կամ նորոգման դեպքում տեղափոխվեն կամ վերաշինվեն դրանց սեփականատիրոջ հաշվին:

Շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովում

Շինարարական արտադրության կազմակերպման նպատակն է՝ կազմակերպչական, տեխնիկական և տեխնոլոգիական նպատակաուղղված համալիր միջոցառումների կիրառման արդյունքում ապահովել՝ սահմանված ժամկետում և պատշաճ որակով

օբյեկտի շահագործումը:

Շինարարական արտադրության կազմակերպումն ապահովում է՝

- 1) օբյեկտի շինարարության բոլոր մասնակիցների համաձայնեցված աշխատանքը՝ Պատվիրատուի (զլխավոր կապալառուի) հետ իրենց գործունեության համակարգմամբ,
- 2) նյութական ռեսուրսների համալիր մատակարարումը՝ հաշվարկված հանգույցի, տեղամասի, սեկցիայի համար օրացուցային գրաֆիկներով նախատեսված ժամկետներում,
- 3) շինարարական, մոնտաժային ու հատուկ շինարարական աշխատանքների կատարումը տեխնոլոգիական հաջորդականության պահպանմամբ և տեխնիկապես հիմնավորված համատեղմամբ,
- 4) անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը,
- 5) շրջակա միջավայրի պահպանության պահանջների ապահովումը:

Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն պետք է օբյեկտի սկզբում և վերջում տեղադրի համապատասխան տեղեկատվական նշաններ, որտեղ պետք է նշված լինի օբյեկտի անվանումը, օբյեկտի շինարարական աշխատանքների ժամկետը, Պատվիրատուն և Կապալառուն, կոնտակտային հեռախոսահամարը: Անհրաժեշտ է համայնքի ներկայացուցիչների հետ ճշտել ստորգետնյա ցանցերի տեղադիրքը և նշանակությունը:

Յուրաքանչյուր շինարարական օբյեկտում անհրաժեշտ է՝

- 1) լրացնել աշխատանքների վարման մատյան,
- 2) կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր,
- 3) անհրաժեշտության դեպքում ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր:

Շինհրապարակը պետք է կահավորված լինի հակահրդեհային միջոցներով և բժշկական առաջին օգնության պարագաներով: Գիշերային պայմաններում շինարարական աշխատանքների իրականացման դեպքում կապալառուն պետք է ապահովի շինհրապարակի և աշխատանքների կատարման վայրի համապատասխան լուսավորությունը:

Աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի մարդկանց անվտանգությունն ու հարմարությունը և պաշտպանի տեղամասին մոտ եղած բնակիչներին և նրանց ունեցվածքը: Պետք է ապահովել հանրային երթևեկությունը նորոգվող տեղամասի հարակից ու տեղամասի սահմաններում գտնվող ճանապարհների վրա՝ մինչև աշխատանքն ընդունվի: Կապալառուն պետք է համագործակցի տեղի ճանապարհային ոստիկանության հետ և ձեռք բերի երթևեկության կազմակերպման պլանի իրականացման համար պահանջվող բոլոր թույլտվությունները:

Շինարարական աշխատանքների ընթացքում պետք է ապահովվել մուտքեր՝ իջատեղերի, ճանապարհների, փողոցների, ձեռնարկությունների տարածքների, կայանատեղերի, բնակելի վայրերի, ավտոտնակների և այլ օբյեկտների համար, երթևեկելի մասից հեռացնել հողի կուտակումներն ու այլ նյութերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում, երբ ճանապարհը բաց է հանրային երթևեկության համար, շինարարական գործողությունները անհրաժեշտ է սահմանափակել.

- պետք է ապահովել առնվազն 3.5մ լայնությամբ երթևեկության գոտիներ,
- կայանատեղերը պետք է տեղադրել երթևեկելի գոտուց առնվազն 4մ հեռու կամ երթևեկության հաստատված արգելապատնեշներից այն կողմ,
- սարքավորումները պետք է բանեցնել երթևեկության ուղղությամբ, եթե դա գործնականում կիրառելի է,
- կից երթևեկության գոտիների շինարարությունը պետք է ավարտել նույն օրը նույն մակարդակի վրա, բացի այն դեպքերից, երբ անկումները գերազանցում են 75մմ-ը և բարձրություններն ունեն 1:3 հարաբերություն: Այն դեպքերում, երբ կից գոտիների անկումները գերազանցում են 75մմ-ը և բարձրություններն ունեն 1:3 հարաբերություն՝ աշխատանքը կարող է թողնվել հաջորդ օրվան: Տվյալ դեպքում գիշերվա համար պետք է տեղադրել <<Անհարթ ծածկ>> զգուշացնող նշաններ, լուսաազդանշանային առկայծող լսատերներ և լուսանդրադարձնող ժապավեններով ամրացված արգելափակոցներ:

Շրջակա միջավայրի պահպանում և աշխատանքի պաշտպանություն

Կապալառուն շինարարության և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս պարտավոր է կատարել շրջակա միջավայրի պահպանության և շինարարական աշխատանքների անվտանգության վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

Կապալառուն աշխատանքներ իրականացնելիս իրավունք չունի օգտագործել Պատվիրատուի տրամադրած նյութերը և սարքավորումները կամ կատարել նրա ցուցումները, եթե դրանք կարող են հանգեցնել կողմերի համար՝ շրջակա միջավայրի պահպանությանն ու շինարարական աշխատանքների անվտանգությանն ուղղված պահանջների խախտմանը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 749):

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ գրունտից և շին. աղբից՝ բեռնումով և տեղափոխումով լցակայան:

